

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԱՆԳՆԵՐԵՆՈՒՄ
ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՀԱՍՄԻԿ ԱՍՄԱՆԳՈՒՅԱՆ

Հայերենի բայական համակարգում ավանդաբար վաղակատար և անցյալ կատարյալ ժամանակներ սահմանվող գնացել եմ/էի—գնացի բայաձևերի ֆունկցիոնալ-իմաստային սահմանազատումն արդի հայագիտության բարդ և, մեր կարծիքով, մինչև վերջը չլուծված խնդիրներից է:

Անգլերենի և հայերենի զուգադրական քերականության տեսանկյունից հայերենի մեզ հետաքրքրող բայաձևերի միջև իմաստային հակադրությունը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ այն առնչվում է անգլերենում պերֆեկտային և ոչ-պերֆեկտային ձևերի փոխհարաբերության և հայերենում՝ անգլերենի պերֆեկտի կարգի արտահայտման միջոցների հարցի հետ: Հակառակ զուգադրության դեպքում, երբ ելակետային լեզուն հայերենն է, իսկ զուգադրվողը՝ անգլերենը, վաղակատար և անցյալ կատարյալ բայաձևերի միջև եղած իմաստային հակադրության պարզաբանումը հնարավորություն կտա ճիշտ ընտրելու անգլերենի ձևերը՝ հայերենի համապատասխան ձևերի իմաստն արտահայտելու համար:

Հայերենի ավանդական քերականության մեջ վաղակատար և անցյալ կատարյալ բայաձևերի իմաստային սահմանազատումը սովորաբար կատարվում է ժամանակային, մասամբ էլ կերպային առումով: Համեմատաբար վերջերս լույս տեսած Ս. Գ. Աբրահամյանի «Ժամանակակից հայերենի քերականություն»¹ ձեռնարկի մեջ հատուկ ուշադրություն է դարձվում նշված բայաձևերի իմաստային սահմանազատման հարցին: Նշելով անցյալ կատարյալի և վաղակատարի իմաստային սերտ կապը, մոտիկությունը ժամանակային պլանում, հեղինակը միաժամանակ ընդգծում է, որ այդ բայաձևերի միջև կա ժամանակային, մասամբ և կերպային հակադրություն², Գնացել է—գնաց ձևերի հակադրության մեջ, ըստ Ս. Գ. Աբրահամյանի, «գնաց ձևը նշում է գործողության կատարված, ավարտված լինելը խոսելու պահից անմիջապես առաջ»³: Անցյալ կատարյալի և վաղակատարի միջև եղած իմաստային տարբերությունը ցույց տալու համար հեղինակը բերում է հետևյալ օրինակը. Եթե ավտոկայանի աշխատակիցը, պատասխանելով ուղևորների

¹ Ս. Աբրահամյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 557—564 և 567—568, 2. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. I, Երևան, 1958, էջ 76—83, է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 369—370, Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, էջ 174—175, 1975, էջ 164—166:

² Հոդվածի հղումները ըստ 2-րդ հրատարակության են (1975 թ.):

³ Ս. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 164:

⁴ Նույն տեղում (ընդգծումը մերն է—Հ. Ա.):

հարցին, Ա ավտոբուսի մասին ասում է գնացել է, իսկ Բ ավտոբուսի մասին՝ գնաց, ապա այդ նշանակում է, որ Ա ավտոբուսն ավելի շուտ է մեկնել, քան Բ ավտոբուսը: Հետևաբար, եզրակացնում է հեղինակը, այստեղ ունենք ժամանակային հաջորդականություն, այսինքն՝ ֆեռականական ժամանակի տարբերություն⁵: Այնուհետև վկայակոչելով Մ. Աբեղյանին, ըստ որի անցյալ կատարյալի արտահայտած գործողությունը կապվում է գործողությանն ակնատես լինելու կամ նրա կատարման իրադրության մեջ լինելու հետ (խոսողն ակնատես է կամ մտածում է իրեն որպես այդպիսին), Մ. Գ. Աբրահամյանը հաստատում է, որ անցյալ կատարյալ բայաձևի ֆունկցիոնալ-իմաստային այս առանձնահատկությունը ևս խոսում է այն մասին, որ գործողությունը կատարվել է խոսելու պահին մոտ ժամանակում⁶: Որպես մեզ հետաքրքրող բայաձևերի իմաստային տարբերակման իր մեկնաբանության ճշտության ապացույց, հեղինակը մատնանշում է նաև այդ ձևերի կապակցելիության յուրահատկությունները ժամանակային տարբեր իմաստ ունեցող բառերի և բառակապակցությունների հետ: Ըստ հեղինակի, խոսելու պահին անմիջապես նախորդող կամ համեմատաբար մոտ ժամանակ ցույց տվող բառերն ու բառակապակցությունները (հենց նոր, այս պահին, այս րոպեին և այլն) գործածվում են անցյալ կատարյալի հետ, մինչդեռ ավելի վաղ ժամանակ ցույց տվող բառերն ու բառակապակցությունները (վաղուց, շատ առաջ և այլն)՝ վաղակատարի հետ: Բերվում են հետևյալ օրինակները. «Կիրովականի ավտոբուսը վաղուց է գնացել, իսկ լենինականինը՝ նոր գնաց: Հենց նոր (այս րոպեին) իմացա, որ նա վաղուց է վերադարձել»⁷: Նշվում է նաև գործողության կարճ տևականությունը, որով անցյալ կատարյալը հակադրվում է մյուս ժամանակաձևերին կերպային առումով:

Անհրաժեշտ է նշել, սակայն, որ, ընայած Մ. Գ. Աբրահամյանի խիստ հետաքրքրական դիտողություններին, նրա տված բացատրությունը, մեր կարծիքով, բավարար չէ անցյալ կատարյալ և վաղակատար ձևերի իմաստային սահմանազատման համար: Գտնված չէ այն հիմնական իմաստային բաղադրիչը (կամ բաղադրիչները), որով նշված բայաձևերը հակադրվում են միմյանց և որի շնորհիվ դրանց գոյությունն անհրաժեշտ է դառնում լեզվի համակարգում: Խոսք է հիմք տալիս մեզ պնդելու, որ հայերենի այս երկու բայաձևերի իմաստային հակադրության մեջ ամեն ինչ մինչև վերջ բացահայտված չէ: Անդրադառնանք հեղինակի բերած օրինակներին. «Կիրովականի ավտոբուսը վաղուց է գնացել, իսկ լենինականինը՝ նոր գնաց: Հենց նոր (այս րոպեին) իմացա, որ նա վաղուց է վերադարձել»: Այստեղ մեկ և մյուս բայաձևերի ընտրությունը, ինչպես տեսանք, հեղինակը բացատրում է այդ բայաձևերի՝ վաղուց և հենց նոր բառերի հետ կապակցելիության յուրահատկությամբ: Սակայն եթե վաղուց ժամանակի մակբայի հետ սովորաբար (թեև ոչ միշտ) օգտագործվում է վաղակատարի ձևը, ապա այդ նույնը չի կարելի պնդել հենց նոր, այս րոպեին և նման մակբայական բառակապակցությունների վերաբերյալ: Այլ կերպ ասած, հենց նոր, այս րոպեին և այլն ժամանակի մակբայների հետ միշտ չէ, որ անպայման անցյալ կատարյալ է գոր-

⁵ Նույն տեղում, էջ 165 (ընդգծումը մերն է—Ղ. Ա.):

⁶ Նույն տեղում: Նմանօրինակ բացատրություն գտնում ենք նաև Վ. Առաքելյանի մոտ (Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 80):

⁷ Նույն տեղում:

ծածվում (համա. կիրովականի ավտորուսը հենց նոր է գնացել, իսկ լենինականինը՝ նրանից առաջ զնաց: Այս ըոպին իմացա, որ նա հենց նոր է վերադարձել): Այսպիսով, հենց նոր, նոր և ժամանակ նշող նման այլ բառերն ու բառակապակցությունները, որոնք ցույց են տալիս խոսելու պահին անմիջապես նախորդող կամ համեմատաբար մոտ ժամանակ, կարող են հավասարապես օգտագործվել ինչպես անցյալ կատարյալի, այնպես էլ վաղակատարի հետ (համա. նաև Արմենը տա՞նն է—Հենց նոր է վերադարձել արշավից, լողասենյակում լվացվում է):

Ո՞րն է այդ դեպքում այս բայաձևերի միջև եղած հիմնական տարբերությունը, ինչու՞ միևնույն կոնտեքստում հնարավոր է մի ձևի փոխարինումը մյուսով և ի՞նչ իմաստային տարբերություն է տալիս դա:

Մեզ հետաքրքրող բայաձևերի ֆունկցիոնալ իմաստային սահմանազաման վերաբերյալ որոշակի ցուցումներ գտնում ենք Մ. Աբեղյանի մոտ, որոնք կարող են օգտակար լինել հայերենի բայի մեր կողմից վերլուծության ենթարկվող ձևերի իմաստային տարբերական համար: Վաղակատարի ձևերի (ինչպես ներկա, այնպես էլ անցյալ ժամանակում) Մ. Աբեղյանի տված սահմանումներից⁸ կարելի է գալ այն եզրակացության, որ վաղակատարի բոլոր ձևերի համար (անկախ եմ/էի օժանդակ բայի ժամանակից) քերականական իմաստի հիմնական բաղադրիչներն են գործողության ավարտվածությունը և նախորդումը ուրե՛կ մոմենտի (ներկայում կամ անցյալում): Բն ինչով է որոշվում և ինչպես է արտահայտվում այդ մոմենտը՝ դրա մասին կիսովի հետո: Իսկ որոշելու համար, թե կա՞րողոք վաղակատարի ձևերի մեջ որևէ այլ իմաստային բաղադրիչ, և եթե կա, ի՞նչ բաղադրիչ է այն, համեմատենք վաղակատարը հայերենի մի այլ բայաձևի՝ անցյալ կատարյալի հետ, որի իմաստային մոտիկությունը վաղակատարի հետ նշել է Մ. Աբեղյանը: Դա ընդգծված է նաև Ս. Գ. Աբրահամյանի վերը հիշված գրքում:

Անհրաժեշտ է, ամենից առաջ, նշել, որ անցյալ կատարյալը հայերենի բայի սահմանական եղանակի կերպաժամանակային ձևերի համակարգում յուրահատուկ տեղ է գրավում. սահմանական եղանակի շրջանակներում ինչպես արտահայտության, այնպես էլ բովանդակության պլանում այն հակադրվում է մյուս բոլոր կերպաժամանակային ձևերին, քանի որ իրենից ներկայացնում է համադրական ձևի տարբերություն մնացած բոլոր կերպաժամանակային ձևերի, որոնք վերլուծական կազմություն ունեն: Բովանդակության պլանում անցյալ կատարյալի և անցյալ ժամանակի մյուս ձևերի միջև եղած տարբերությունը Մ. Աբեղյանը տեսնում է նրանում, որ վաղակատարի դեպքում (ըստ Մ. Աբեղյանի «վաղակատար ներկա») խոսողը հարաբերակցում է անցյալում տեղի ունեցած, ավարտված գործողությունը ներկայի հետ, մինչդեռ անցյալ կատարյալի դեպքում նա նկատի ունի «հենց անցյալի ժամանակակետի մեջ ընկնող մի գործողություն»⁹: Այլ կերպ ասած՝ ժամանակի ուղղի վրա ընկած ուղղակի կետ, այն կոնկրետ պահը, երբ տեղի է ունենում և ավարտվում է գործողությունը: Նշվում է նաև գործողության ոչ-տևական, վայրկենական բնույթը, որ տվյալ դեպքում մեզ չի հետաքրքրում, քանի որ այս դեպքում գործ ունենք ավելի շուտ տվյալ բայաձևի կերպային

⁸ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 560:

⁹ Նույն տեղում, էջ 562—563:

և ոչ թե ժամանակային բնութագրման հետ¹⁰, Վերը նշված իմաստային հակադրությունը կարելի է սահմանել որպես կոնկրետություն||աշ-կոնկրետություն (անորոշություն) իմաստային բաղադրիչների հակադրություն, հասկանալով առաջին դեպքում (անցյալ կատարյալ) խոսքի մոմենտին նախորդող որոշակի, կոնկրետ ժամանակակետը, երբ տեղի է ունեցել և ավարտվել է գոր-

Աղյուսակ N 1

Ձևը	Իմաստը
Անցյալ կատարյալ	1. Ավարտվածություն 2. Նախորդում խոսքի մոմենտին 3. Կոնկրետություն 4. Ոչ-տեղականություն
Վաղակատար	1. Ավարտվածություն 2. Նախորդում ներկայի կամ անցյալի որևէ մոմենտին 3. Անորոշություն 4. Մեղանկություն

ծողությունը (դրա շնորհիվ ինքը՝ գործողությունն էլ դառնում է կոնկրետ գործողություն, որից և բխում է նրան ականատես լինելու կամ նրա կատարման իրադրության մեջ լինելու յուրահատկությունը), իսկ երկրորդ դեպքում (վաղակատար)՝ այդպիսի կոնկրետության, որոշակիության բացակայությունը: Վերջին դեպքում մեղ հետաքրքրում է ոչ թե անցյալի հատվածի վրա գտնվող որոշակի ժամանակակետը, այլ այն, որ գործողությունը նախորդել է ինչ-որ բանի, ինչ-որ մոմենտին, ըստ որում այն հատվածը, որի մեջ կատարվել, ավարտվել է գործողությունը, անորոշ է:

Այսպիսով, կարող ենք առանձնացնել անցյալ կատարյալ և վաղակատար բայաձևերի քերականական իմաստը բնութագրող հիմնական իմաստային բաղադրիչները (աղյուսակ № 1):

Աղյուսակից երևում է, որ անցյալ կատարյալը և վաղակատարը ունեն մեկ ընդհանուր իմաստային բաղադրիչ, քանի որ երկուսն էլ ցույց են տալիս

¹⁰ Տվյալ դեպքում հաշվի չենք առնում նաև Մ. Արեղյանի կողմից վաղակատարին (ներկա) վերադրվող հետևանքի, արդյունքի իմաստը, որը նրա տված սահմանումների համաձայն բնորոշ է վաղակատարի ոչ բոլոր ձևերին (վաղակատարի անցյալ ձևերի սահմանման մեջ Մ. Արեղյանի մոտ արդյունքի հետևանքի մոմենտը բացակայում է) և այդ պատճառով էլ չի կարող դիտվել որպես վաղակատարի ձևերի համար ընդհանուր իմաստային բաղադրիչ: Բացի այդ, ինչպես ցույց ենք տվել մեր «Հայերենի բայի խոնարհման ձևերի համակարգի շուրջը» հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2), արդյունքի հետևանքի իմաստը կապված է բայի լեքսիկական իմաստի հետ և երկրորդաբար բխում է վաղակատարի ընդհանուր քերականական իմաստից, բայց տվյալ քերականական ձևի հիմնական իմաստային բաղադրիչը չէ:

վերջացած, ավարտված գործողություն: Այդ ձևերը որոշ իմաստով մոտենում են միմյանց նաև իրենց քերականական իմաստի երկրորդ բաղադրիչով, որը նախորդում է: Սակայն նախորդումը անցյալ կատարյալի և վաղակատարի մեջ այլ ձևով է իմաստավորվում, այլ կերպ ասած՝ տարբեր հարաբերություններ է ցույց տալիս: Անցյալ կատարյալ բայաձևի մեջ այդ նախորդումն իմաստավորվում է որպես տվյալ գործողության հարաբերությունը խոսքի մոմենտի հետ՝ գործողությունը տեղի է ունեցել, ավարտվել է անցյալի որոշակի ժամանակակետում, ըստ որում հաշվառված էլակետն այս դեպքում խոսքի մոմենտն է: Ինչ վերաբերում է վաղակատարին, ապա այստեղ նախորդումն իմաստավորվում է ոչ թե խոսքի մոմենտի, այլ ինչ-որ այլ մոմենտի կամ գործողության հարաբերությամբ: Այդ իսկ պատճառով պատահականությունն է, որ կոնտեքստում (այսինքն արդեն ոչ թե հարացուցային, այլ շարահյուսական մակարդակում) վաղակատարը սովորաբար հանդես է գալիս քերականական մեջ ներկայի (այսպես կոչված ներկայի վաղակատարի դեպքում) կամ անցյալի (այսպես կոչված անցյալի վաղակատարի դեպքում) ձևերի հետ: Օրինակ՝ «Մտնում եմ հորս առանձնասենյակը: Մեր ամբողջ ընտանիքն արդեն հավաքված է: Մայրս նստել է հայրիկի կողքին... Կարենը հենվել է լուսամուտին, իսկ հայրիկն արդեն տեղավորվել է իր սովորական տեղում: Հավաքվել ու ինձ են սպասում»¹¹:

Միանգամայն ակնհայտ է, որ տվյալ կոնտեքստում նստել է, հենվել է, տեղավորվել է, հավաքվել են բայաձևերով արտահայտված գործողությունները հարաբերակցված են այն գործողությունների հետ, որոնք արտահայտված են մտնում եմ, սպասում են բայաձևերով: Առաջին ձևերը (վաղակատար) արտահայտում են այնպիսի գործողություններ, որոնք կատարվել, ավարտվել են այն գործողություններից առաջ, որոնք արտահայտված են երկրորդ բայաձևերով: Իսկ քանի որ վերջիններիս արտահայտում են խոսքի մոմենտին տեղի ունեցող գործողություններ (մտնում եմ, սպասում են), ապա նստել է, հենվել է, տեղավորվել է, հավաքվել են ձևերով արտահայտված գործողությունները մեր կողմից ընկալվում են որպես գործողություններ, որոնք նախորդում են խոսքի մոմենտին, հարաբերակցված են նրա հետ: Սակայն գործողության հարաբերությունը խոսքի մոմենտին տվյալ դեպքում միջնորդավորված հարաբերություն է, այն իրականացվում է ներկա ժամանակով արտահայտված գործողության (մտնում եմ, սպասում են) հետ հաստատվող կապի միջոցով: Ներկայի և վաղակատարի նույն հարաբերությունը տեսնում ենք նաև բազմաթիվ այլ դեպքերում: Օրինակ՝ «Կարենն արձակուրդ է վերցրել և արդեն բավական ժամանակ է ինչ աշխատում է դիսերտացիայի վրա»¹², «Գարեգինը շշմած կանգնել է ու ոչինչ չի ասում... Գուցե ավստսում է նաև այն տասնյակ նամակների համար, որ ուրիշ տղաների փոխարեն գրել է աղջիկներին»¹³, «Խառնում է գրքերս, շնայած տասն անգամ տեսել ու նույնիսկ վերցրել է կարդալու»¹⁴: Համապատասխան ժամանակակետը, որին նախորդել է վաղակատարով արտահայտված գործողությունը, կարող է նշվել ոչ

11 Պ. Զեյբուլյան, Մեզանից հետո, Երևան, 1963, էջ 32:

12 Նույն տեղում, էջ 15:

13 Նույն տեղում, էջ 24:

14 Նույն տեղում, էջ 29:

միայն ներկայի որևէ գործողության, այլև համապատասխան պարագաների միջոցով՝ Օրինակ՝ «2-ն որ մինչև հիմա ես չեմ իմացել նրա գոյության մասին»¹⁵:

Ինչ վերաբերում է վաղակատարի անցյալի ձևերին, ապա այստեղ նախորդման իմաստը շատ ավելի ցայտուն է հանդես գալիս: Անցյալի վաղակատարի ցույց տված գործողությունը հարաբերակցվում է մի անցյալ գործողության կամ անցյալի որևէ ժամանակակետի հետ, ըստ որում այստեղ էլ գտնում ենք նույն հարաբերությունը՝ վաղակատարով արտահայտված գործողությունը նախորդում է անցյալ ժամանակի բայաձևով արտահայտված գործողությանը: Օրինակ՝ «Երբ կայարան հասանք, գնացքն արդեն մեկնել էր», որտեղ մեկնել էր (անցյալ վաղակատար) բայաձևով արտահայտված գործողությունը նախորդել է հասանք (անցյալ կատարյալ) բայաձևով արտահայտված գործողությանը¹⁶:

Այսպիսով, ոչ միայն հարացուցային, այլև շարահյուսական մակարդակում որոշակի երևում է, որ վաղակատարի հակադրությունը անցյալի ձևերին, և առաջին հերթին անցյալ կատարյալին այն է, որ վաղակատարի ձևերը ցույց են տալիս նախորդում, մինչդեռ անցյալի մյուս ձևերը (կատարյալ, անկատար) այդպիսի նախորդում ցույց չեն տալիս: Անցյալ կատարյալը, ինչպես նաև անկատար դերբայով և օժանդակ բայով կազմված բոլոր վերլուծական ժամանակաձևերը, ի հակադրություն վաղակատարի, ցույց են տալիս գործողությունների միաժամանակություն:

Վերը շարադրվածից հետևում է, որ հայերենի վաղակատարի ձևերը հակադրվում են ներկա և անցյալ գործողություն ցույց տվող մյուս ձևերին որպես այնպիսի բայաձևեր, որոնք արտահայտում են նախորդում. ըստ որում, նախորդման մեջ արտահայտվում է հարաբերությունը ներկայի (դա նախաներկան է՝ գրել եմ) և անցյալի (դա նախանցյալն է՝ գրել էի) նկատմամբ¹⁷:

Վաղակատարի ձևի (վաղակատար դերբայ-իմ/էի, որտեղ դերբայն ինքն արտահայտում է նախորդում՝ ի հակադրություն անկատար դերբայի, որը միաժամանակություն է ցույց տալիս) քերականական իմաստի և գործածության ուսումնասիրությունը բերում է այն հզրակացության, որ տվյալ դեպքում չի կարելի խոսել ո՛չ ժամանակի և ո՛չ էլ կերպի քերականական կարգի մասին: Վաղակատարի հակադրությունը հայերենի մյուս կերպաժամանակային ձևերին, մասնավորապես անցյալի բայաձևերին, կազմում է բայի հատուկ ֆեռալանակա կարգ: Այդ քերականական կարգը մեծ ընդհանրություն ունի անգլերենի ժամանակային վերաբերության կարգի հետ, որն առաջին անգամ առանձնացրել է Ա. Ի. Սմիռնիցկին՝ անգլերենի պերֆեկտային ձևերի բնութագրման համար¹⁸, Հետևաբար, անգլերենի և հայերենի համար բացահայտվում է մի նոր ընդհանրություն: Այն արտահայտվում է նրանով, որ երկու լեզվում էլ գոյություն ունի ժամանակային վերաբերության ֆեռալանակա

¹⁵ Նույն տեղում, էջ 41:


¹⁶ Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. I, էջ 82, օրինակները:

¹⁷ Ժամանակի և հաջորդականության կարգի փոխհարաբերության մասին տե՛ս Գ. Զառակյան, Հայոց լեզվի կառուցվածքը և զարգացումը, Երևան, 1969, էջ 268—270:

¹⁸ А. И. Смирницкий, Морфология английского языка, М., 1959, с. 308—316; Л. С. Бархударов, Русско-английские языковые параллели («Русский язык за рубежом», 1973, № 4, с. 65—68):

կարգ, որն անգլերենում արտահայտվում է պերֆեկտի, իսկ հայերենում՝ վաղակատարի ձևերով¹⁹։ Սակայն հայերենի վաղակատար և անգլերենի պերֆեկտային ձևերը, համընկնելով իրենց հիմնական քերականական իմաստով, զուգադրվող լեզուներից յուրաքանչյուրում ունեն իմաստի, ծավալի և գործառության մի շարք յուրահատկություններ, որոնք հանգեցնում են որոշակի

Վոյուսակ N 2



տարբերությունների՝ կապված յուրաքանչյուր լեզվում դրանց տարբեր ֆունկցիոնալ-իմաստային բնութագրման հետ։ Պերֆեկտային (վաղակատար) ձևերի գործառության հիմնական տարբերությունը անգլերենում և հայերենում կապված է, նախ և առաջ, այն բանի հետ, որ բայի կերպաժամանակային ձևերի համակարգը և այդ ձևերի բաշխումը զուգադրվող լեզուներում հանդես են բերում զգալի տարբերություններ։ Այսպես, օրինակ, անգլերենի սահմանական եղանակի ներգործական սեռի բայաձևերի համակարգում պերֆեկտային և ոչ-պերֆեկտային ձևերի, ինչպես նաև ընդհանուր և շարունակական կերպի բայաձևերի միջև հակադրությունը խիստ հետևողականորեն անցնում է բայի ողջ հարացուցցով (ներառյալ բայի ոչ-դիմավոր ձևերը) և տալիս է այդ ձևերի ու դրանց իմաստների լրիվ, ավարտված, համաշափական (սիմտրիկ) համակարգ։ Ինչ վերաբերում է հայերենին, ապա այստեղ, ժամանակի, կերպի և ժամանակային վերաբերության քերականական կարգերի փոխհարաբերության առումով, բայի կերպաժամանակային ձևերի համակարգը մեզ ներկայանում է որպես ոչ լրիվ, որոշ իմաստով անավարտ, անհամաշափ (ասիմտրիկ) համակարգ (աղյուսակ N 2)։ Այդ պատճառով էլ

19 Գ. Զահուկյանը վաղակատարի իմաստը բնութագրում է որպես ոչ-իրադրական ժամանակ և դիտում է որպես ժամանակի քերականական կարգի ենթակարգ (Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 269)։

այստեղ հակագրությունը վաղակաաար (պերֆեկտային) և ոչ-վաղակաաար (ոչ-պերֆեկտային) ձևերի միջև, ի տարբերություն անգլերենի, չի ընդգրկում բայի ողջ համակարգը: Սրանից հետևում է. որ ժամանակի վերաբերության կարգը՝ նախորդայնությունը, հայերենում չի գտնում բայի ողջ հարացույցով անցնող իր լրիվ արահայաությունը: Այստեղ նախորդայնությունն արտահայտվում է միայն նախաներկայի (գրել եմ) և նախանցյալի (գրել էի) ձևով: Ինչ վերաբերում է նախապառնուն, ապա այն հայերենում, ի տարբերություն անգլերենի, արտահայտվում է երկրորդային նկարագրական բառակապակցություններով, որոնք չեն մտնում վաղակաաարի համակարգի մեջ: Հմմտ. անգլերեն (I) shall have written, որ մտնում է (I) have written (I) had written հարացուցաշարի մեջ, մինչդեռ հայ. գրած կլինեմ կապակցությունը չի մտնում գրել եմ/էի հարացուցաշարի մեջ: Ավելին, այն հարցը, թե գրած կլինեմ աիպի բառակապակցությունները մտնո՞ւմ են արդո՞ք հայերենի բայի հարացույցի մեջ, մնում է բաց: Համեմայն դեպս, գրած կլինեմ կապակցությունը գրել եմ/էի կապակցությունների հետ մի շարքում որպես հարացուցային ձև դնելը օրինաչափ չէ:

Անգլերենի և հայերենի բայի կերպաժամանակային ձևերի համակարգում վերը նշված տարբերությունը, նույնիսկ ընդհանուր քերականական կարգերի առկայության պայմաններում, պետք է, ընկանաարար, հանդեցներ և հանդեցնում է դուգադրվող լեզուների միջև որոշակի անհամապատասխանությունների ոչ միայն ֆունկցիոնալ, այլև համապատասխան ձևերի բաշխման առումով, ձևեր, որոնք օգտագործվում են այդ կարգերի, սովյալ գեպքում ժամանակային վերաբերության քերականական կարգի արտահայտման համար: Ինչ վերաբերում է անգլերենի պերֆեկտային ձևերի և հայերենի վաղակաաարի ֆունկցիոնալ տարբերության մասնավոր դեպքերին, ապա դա առանձին ուսումնասիրության հարց է և դուրս է սույն հոդվածի սահմաններից:

КАТЕГОРИЯ ВРЕМЕННОЙ ОТНЕСЕННОСТИ В АНГЛИЙСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

АСМИК АСМАНГУЛЯН

Р е з ю м е

Функционально-семантическое разграничение армянских глагольных форм *վաղակաաար* и *անցյալ կատարյալ*, выделение их основных семантических компонентов, определение общности и различия в грамматическом значении этих форм представляет особый интерес в плане сопоставительной грамматики английского и армянского языков, поскольку данный вопрос сопрягается с вопросом о соотношении перфектных и неперфектных форм английского глагола и о средствах выражения категории перфекта в армянском языке. Формы *վաղակաաար* противопоставляются всем другим видо-временным формам армянского глагола, образуя особую грамматическую категорию, аналогичную категории временной отнесенности, выделенной А. И. Смирницким для характеристики перфектных форм английского языка. Совпадая в своем основ-

ном значении, сопоставляемые глагольные формы армянского и английского языков имеют, однако, в каждом из рассматриваемых языков ряд особенностей в объеме значения и функционирования, что приводит к определенным расхождениям. Принципиальное различие в функционировании анализируемых форм в английском и армянском языках связано, прежде всего, с тем, что сама система видо-временных форм глагола и дистрибуция этих форм в сравниваемых языках в значительной мере расходятся.